

Հայտարարություն մամուլի համար

Վաղը կընդունվի Եվրոպական հարեւանության քաղաքականության տարեկան զեկույցների փաթեթը: Եվրոպական հանձնաժողովն ու Եվրոպական միության արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչը կհրապարակեն Արեւելյան Եվրոպայի և հարավային Միջերկրականի 16 հարեւան երկրների հետ Եվրոպական հարեւանության քաղաքականության (ԵՀՔ) իրականացման առաջընթացի իրենց գնահատականը և առաջարկություններ կներկայացնեն հաջորդ տարվա համար:

Մամուլի ներկայացուցիչներին հրավիրում ենք մասնակցելու Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիսթեայի մամուլի ասուլիսին նվիրված Եվրոպական հարեւանության քաղաքականության տարեկան զեկույցներին, այդ թվում նաև Հայաստանի առաջընթացի զեկույցին: Ասուլիսը տեղի կունենա ս.թ. մարտի 25-ին, ժամը՝ 17:45-ին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունում (հասցե՝ ք. Երեւան Ֆրիկի փող., 21 շենք):

Պատվիրակության շենք մուտք գործելու համար հարկավոր է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ